# «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գործունեության իրականացման ծանուցման մասին» 2015 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով» բառերից հետո լրացնել «, սույն օրենքով սահմանված ներմուծման և արտահանման ծանուցման ենթակա գործունեության տեսակների մասով՝ համացանցային կայք էջում հասանելի /swis.trade.gov.am/ «Միասնական հայտ» համակարգի միջոցով» բառերով։

**Հոդված 2. Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո:
2. 2023 թվականի հունվարի 1-ից ներմուծման և արտահանման ծանուցման ենթակա գործունեության տեսակների մասով պատշաճ ծանուցումն իրականացվում է միայնհամացանցային կայք էջում հասանելի /swis.trade.gov.am/ «Միասնական հայտ» համակարգի միջոցով։